07.11.23 - 07.11.23
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Ռոբերտ Շումանի անվան սրահ

Ս.թ. նոյեմբերի 7-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ Ռոբերտ Շումանի անվան սրահում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի և «Align Technology» բժշկական սարքերի համաշխարհային ընկերության համագործակցության շրջանակում ԵՊՀ ուսանողների համար կանցկացվի հանդիպում ընկերության ներկայացուցիչների հետ։

Հանդիպման ընթացքում կանցկացվի ֆլեշ-մենթորական «Ինչպե՞ս կառուցել ձեր կարիերան SS ոլորտում» թեմայով դասընթաց: «Align Technology» ընկերության մասնագետները կներկայացնեն SS ոլորտում կարիերա կառուցելու ուղիների լավագույն փորձը և գիտելիքները, կխոսեն կարիերայի հնարավոր ուղիների և SS ընկերությունում հարցազրույցի գործընթացի վերաբերյալ:

Դասընթացը կվարի ընկերության HR տնօրեն Նատալյա Սուվորովան։

Հանդիպման ընթացքում կքննարկվեն հետևյալ թեմաները՝

• «Align Technology»-ն՝ որպես գործատու,

• ընկերության հետազոտության և զարգացման (R&D) կենտրոնը Հայաստանում,

• պրակտիկայի հնարավորություն «Align Technology»-ում,

• հնարավոր ուղիներ SS ոլորտում և արդյունավետ կարիերայի պլանավորման մեջ,

• ինչպե՞ս պատրաստվել հարցազրույցին և բանակցել աշխատանքի առաջարկի շուրջ,

• ի՞նչ է անհրաժեշտ SS ոլորտում հաջողակ լինելու համար։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am